

ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի «Հայաստանի Հանրապետությունում հաշվապահների որակավորման կարգը հաստատելու մասին» N 1048-Ն որոշմամբ հաստատված՝ հաշվապահների որակավորման կարգում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

1. Քննությունն անցկացվում է 2 փուլով՝ համակարգչում նախօրոք զետեղված հարցաշարից համակարգչային համապատասխան ծրագրի միջոցով պատահական ընտրված թեստերից (1-ին՝ թեստերի փուլի համար) և խնդիրներից (2-րդ՝ խնդիրների փուլի համար) կազմված հարցաթերթիկներով:
2. Հարցաթերթիկները կազմվում են քննության օրը՝ հանձնաժողովի առնվազն երեք անդամի ներկայությամբ համակարգչային ծրագրի միջոցով՝ պատահական ընտրության սկզբունքով: Քննության առաջին փուլն անցկացնելու նպատակով համակարգչային ծրագրի միջոցով յուրաքանչյուր դիմորդի համար ձևավորվում է առանձին հարցաթերթիկ: Քննության երկրորդ փուլի հարցաթերթիկները ևս ձևավորվում են նույն սկզբունքով, սակայն երեք տարբերակից, որոնցից հանձնաժողովի առնվազն երեք անդամների կողմից պատահական ընտրության սկզբունքով ընտրվում է մեկը, որը տրամադրվում է դիմորդներին: Համակարգչային ծրագիրը ամփոփում է քննության առաջին փուլի արդյունքները՝ ըստ յուրաքանչյուր դիմորդի վաստակած միավորների քանակի և տոկոսի՝ յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատելով մեկ միավոր, իսկ սխալ պատասխանը՝ զրո միավոր: Դիմողը քննության երկրորդ փուլ է անցնում, եթե առաջին փուլի առաջադրանքների կատարման արդյունքում հավաքել է առնվազն 54 միավոր (անցողիկ միավոր), այդ թվում՝ հարկերի և այլ պարտադիր վճարների վերաբերյալ հարցերից (թեստերից)՝ առնվազն 14 միավոր, տնտեսական իրավունքի և աուդիտի վերաբերյալ հարցերից (թեստերից)՝ առնվազն 7 միավոր: Հանձնաժողովը քննության առաջին փուլն ավարտվելուց հետո, համակարգչային ծրագրի տվյալների հիման վրա, ամփոփում է դիմողների աշխատանքների արդյունքները, ընդունում է որոշում նրանց երկրորդ փուլ անցնելու հարցի վերաբերյալ և քննության երկրորդ փուլն սկսելուց առնվազն մեկ ժամ առաջ հրապարակում քննության առաջին փուլի արդյունքները:

3. Քննության առաջին փուլի տևողությունը սահմանվում է մեկ ժամ երեսուն րոպե, իսկ երկրորդ փուլինը՝ երկու ժամ երեսուն րոպե: Քննության առաջին փուլի ժամկետի սահմանափակումը նախատեսված է նաև համակարգչային ծրագրով (մեկ ժամ երեսուն րոպե) և դիմորդը հնարավորություն ունի հետևելու իրեն տրված ժամանակին: Եթե դիմորդը շուտ է ավարտել իր աշխատանքը (մինչև նախատեսված ժամկետի ավարտը), ապա նա կարող է սեղմել <<ավարտել>> կոճակը

Թեստը կավարտվի 90 րոպեից Ավարտել Թեստավորումը

հակառակ դեպքում՝ ծրագրի համաձայն, նշված ժամկետը (90 րոպե) լրանալուց հետո աշխատանքը կհամարվի ավարտված: Քննության երկրորդ փուլի համար սույն կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո հանձնաժողովի նախագահը կամ քարտուղարը հայտարարում են սահմանված ժամանակն ավարտված լինելու մասին, որից հետո դիմողը պարտավոր է խնդիրների պատասխանները հանձնել հանձնաժողովին: Խնդիրների փուլում դիմողների աշխատանքները ծածկագրվում են հանձնաժողովի սահմանած կարգով: Ծածկագրերը վերծանվում են միայն քննության խնդիրների փուլի արդյունքների ամփոփումից հետո: Հարցերի պատասխանները թեստերի փուլում նշվում են համակարգչում, իսկ խնդիրների փուլում՝ հանձնաժողովի կողմից տրամադրված թղթերի վրա:

4. Քննության արդյունքները գնահատվում են 105 միավորի սահմաններում: Ընդ որում, յուրաքանչյուր հարցի (թեստի) ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, իսկ խնդիրները հինգ միավորի սահմաններում՝ 0.1 տասնորդականի ճշտությամբ:

5. Քննության վերջնական արդյունքները հրապարակվում են համապատասխան հայտարարությունը ՀՀ ֆինանսների նախարարության ջենքի (Մելիք-Ադամյան 1) առաջին հարկում փակցնելու միջոցով: